

# Բլուրներն ինչպես սպիտակ փղեր

## Բլուրներն ինչպես սպիտակ փղեր

հեղինակ՝ Էռնեստ Հեմինգուեյ  
թարգմանիչ՝ Սարգիս Փանոսյան  
աղբյուր՝ «XXրդ դարի արտասահմանյան  
արձակ»\_(1\_հատոր)

Էբրոյի[1] դաշտավայրը եզերող բլուրները երկար էին ու սպիտակ: Այս մասում ոչ ծառեր կային եւ ոչ էլ ստվեր, ու կայարանն ընկած էր արեւի տակ՝ երկու երկաթուղիների միջեւ: Կայարանի դիմաց շենքի հեղձուցիչ ստվերն էր: Խորտկարանի դռնից, ճանճերից պաշտպանվելու համար բամբուկի փայտիկներից վարագույր էր կախված: Ամերիկացին մի աղջկա հետ նստեց դրսի ստվերում՝ սեղանի մոտ: Խիստ շոգ էր, իսկ ճեպընթացը Բարսելոնայից գալու էր քառասուն րոպե հետո: Այստեղ այն կանգնում էր երկու րոպե, ապա մեկնում Մադրիդ:

— Ի՞նչ էինք խմելու,— հարցրեց աղջիկը: Նա հանել էր գլխարկը եւ դրել սեղանին:

— Անտանելի շոգ է,— ասաց տղամարդը:

— Արի գարեջուր խմենք:

— Dos cervezas[2], — վարագույրի ետեւից ձայն տվեց տղամարդը:

— Միանգամից մեծո՞վ,— հարցրեց մի կին խորտկարանի մուտքից:

— Այո: Երկու մեծ գավաթով:

Կինը երկու գավաթ գարեջուր եւ թաղիքե երկու տակդիր բերեց: Նա դրանք դրեց սեղանին եւ նայեց տղամարդուն ու աղջկան: Աղջիկը նայում էր բլուրների շարքին: Արեւի տակ նրանք սպիտակ էին, իսկ շուշրն ամեն ինչ գորշավուն էր ու չոր:

— Նրանք նման են սպիտակ փղերի,— ասաց աղջիկը:

— Ես երբեք չեմ տեսել,— տղամարդը խմեց իր գարեջուրը:

— Դու չէիր էլ կարող տեսնել:

— Կարող էի,— ասաց տղամարդը:— Իսկ այն, որ դու ասում ես, թե չէի կարող, ոչինչ չի նշանակում:

Աղջիկը նայեց հուլունքաշար վարագույրին:

— Նրանք ինչ-որ բան են նկարել դրա վրա,— ասաց նա:— Այդ ի՞նչ է նշանակում:

— Anis del Toro: Խմիչք է:

— Կարո՞ղ էինք փորձել:

— Լսեք,— փայտիկների արանքից ձայն տվեց տղամարդը: Կինը դուրս եկավ խորտկարանից:

— Չորս ռեպ:

— Մենք երկու բաժակ Անիս դեղ Տորո ենք ուզում:

— Ջրո՞վ:

— Դու ջրո՞վ ես ուզում:

— Չգիտեմ,— ասաց աղջիկը:— Իսկ ջրով լա՞վ է:

— Լավ է:

— Դուք ջրո՞վ եք ցանկանում,— հարցրեց կինը:

— Այո՛, ջրով:

— Մատուտակի[3] համ է տալիս,— ասաց աղջիկը եւ ցած դրեց բաժակը:

— Ամեն ինչ էլ այդպես է:

— Այո,— ասաց աղջիկը:— Ամեն ինչ մատուտակի համ է տալիս: Հատկապես այն ամենը, ինչի երկար ես սպասել: Օշինդրոդու նման:

— Օ՛հ, թող այդ:

— Դու սկսեցիր,— ասաց աղջկը:— Ես ուրախ էի: Ես հրաշալի ժամանակ էի անցկացնում:

— Լավ: Եկ փորձենք գվարճանալ:

— Դե, ես փորձում էի: Ես ասացի . բլուրները նման են սպիտակ փղերի: Չվարճալի չէ՞ր:

— Չվարճալի էր:

— Ես ցանկացա փորձել այս նոր խմիչքը: Շրջագայել եւ նոր խմիչքներ փորձել, ահա այն ամենը, ինչ մենք անում ենք: Այդպես չէ՞:

— Այդպես է:

Աղջիկը նայեց բլուրների շարքին:

— Հրաշալի բլուրներ են,— ասաց նա:— Իրականում նրանք նման չեն սպիտակ փղերի: Ես միայն նկատի ունեի նրանց մաշկի գունավորումը ծառերի արանքից:

— Էլի խմե՞նք:

— Կարելի է:

Տաք քամին բամբուկե վարագույրը հրեց դեպի սեղանը:

— Գարեջուրը սառն է եւ հաճելի:

— Հրաշալի է,— ասաց աղջիկը:

— Դա, իրոք, մի չտեսնված պարզ վիրահատություն է, Ջի՛գ,— ասաց տղամարդը:— Դա ընդհանրապես վիրահատություն էլ չէ:

Աղջիկը նայեց սեղանի հենակին՝ ոտքերը դնելով նրա վրա:

— Ես գիտեմ, քեզ չէր կարելի խնդրել, Ջի՛գ: Բայց սարսափելի ոչինչ չկա: Միայն պիտի սրսկեն:

Աղջիկը ոչինչ չասաց:

— Ես կգամ քեզ հետ ու կողքիդ կմնամ ամբողջ ժամանակ: Նրանք միայն կսրսկեն, եւ հետո ամեն ինչ սովորականի նման կլինի:

— Հետո ի՞նչ ենք անելու:

— Հետո լավ կլինի: Ճիշտ առաջվա նման:

— Ինչո՞ւ ես այդպես կարծում:

— Միայն դա է մեզ խանգարում: Մեր դժբախտության միակ պատճառը դա է:

Աղջիկը նայեց բամբուկաշար վարագույրին, երկարացրեց ձեռքը եւ բռնեց երկու ձողիկները:

— Եվ դու կարծում ես, որ հետո մենք երջանի՞կ կլինենք:

— Այո, կլինենք: Դու մի՛ վախեցիր: Ես շատ մարդկանց գիտեմ, որ այդպես է արել:

— Ուրեմն ես էլ,— ասաց աղջիկը:— Եվ դրանից հետո նրանք ընդհանրապես երջանի՞կ էին:

— Լավ,— ասաց տղամարդը,— եթե դու չես ցանկանում, մի՛ արա: Չէի ցանկանա, որ դու այդ անեիր, եթե ինքդ չես ուզում: Բայց ես գիտեմ, որ դա շատ հեշտ է:

— Եվ, դու, իրոք, ուզո՞ւմ ես:

— Իմ կարծիքով ամենահարմարը դա է: Բայց եթե դու, իրոք, չես ուզում, պետք չէ:

— Իսկ եթե ես այդ անեմ, դու երջանիկ կլինե՞ս, ամեն ինչ առաջվա պես կլինի՞ եւ դու կսիրե՞ս ինձ:

— Ես հիմա էլ սիրում եմ: Դու գիտես, որ քեզ սիրում եմ:

— Ես գիտեմ: Բայց եթե ես այդ անեմ, հետո նորից լավ կլինի՞: Եթե ասեմ, որ բլուրները նման են սպիտակ փղերի, այդ քեզ դո՞ւր կգա:

— Ինձ դուր է գալիս: Ինձ հիմա էլ այդ դուր է գալիս: Միայն թե չեմ կարող մտածել այդ մասին: Դու գիտես, ինչպիսին եմ ես, երբ զայրանում եմ:

— Եթե ես այդ անեմ, դու էլ երբեք չե՞ս զայրանա:

— Ես զայրանում եմ, որովհետեւ դա շատ հեշտ է:

— Ուրեմն ես կանեմ այդ: Որովհետեւ ես չեմ մտածում իմ մասին:

— Ի՞նչ ես ուզում անել:

— Ես չեմ մտածում իմ մասին:

— Դե, իսկ ես մտածում եմ քո մասին:

— Օ՛հ, այո: Բայց ես չեմ մտածում իմ մասին: Եվ կանեմ այդ ու հետո ամեն ինչ լավ կլինի:

— Եթե այդպես ես մտածում, չեմ ուզում, որ անես այդ:

Աղջիկը վեր կացավ եւ գնաց դեպի կայարանի վերջը: Հանդիպակաց կողմում հացահատիկի դաշտերն էին եւ ծառերն Էբրոյի երկայնքով: Գետից հեռու առանձնացած լեռներն էին: Ամպի ստվերը սահեց հացահատիկի դաշտի վրայով, եւ աղջիկը ծառերի միջեւ տեսավ գետը:

— Եվ այս բոլորը կարող էր մերը լինել,— ասաց նա:— Եվ մենք կարող էինք ամեն ինչ ունենալ, բայց ամեն օր մենք դրանք դարձնում ենք ավելի ու ավելի անհասանելի:

— Ի՞նչ ասացիր:

— Ասացի՛ կարող էինք ամեն ինչ ունենալ:

— Կարող ենք ամեն ինչ ունենալ:

— Ո՛չ, չենք կարող:

— Կարող ենք ամեն տեղ գնալ:

— Ո՛չ: Եթե որեւէ բան ձեռքիցդ մի անգամ բաց ես թողնում, այն էլ երբեք չի վերադառնում:

— Բայց մենք ոչինչ բաց չենք թողել:

— Կսպասենք, կտեսնենք:

— Գնանք ստվերը,— ասաց տղամարդը:— Դու չպետք է հուզվես:

— Ես չեմ հուզվում,— ասաց աղջիկը:— Պարզապես գիտեմ ինչն ինչոց է:

— Ես չեմ ուզում դու որեւէ բան անես, եթե ինքդ չես ցանկանում...

— ... կամ եթե դա ինձ վնաս է,— ասաց աղջիկը:— Գիտեմ: Էլի գարեջուր խմե՞նք:

— Լավ: Բայց դու պետք է հասկանաս...

— Հասկանում եմ,— ասաց աղջիկը:— Միգուցե լռեի՞նք:

Նրանք նստեցին սեղանի մոտ: Աղջիկը նայում էր դաշտավայրից այն կողմ՝ խանձված բլուրներին: Իսկ տղամարդը մերթ նայում էր նրան, մերթ՝ սեղանին:

— Դու պետք է հասկանաս,— ասաց տղամարդը,— որ ես չեմ ուզում այդ անես, եթե ինքդ չես ցանկանում: Ես, իրոք, պատրաստ եմ տանել այդ, եթե դա քեզ համար որեւէ նշանակություն ունի:

— Քեզ համար դա ոչ մի նշանակություն չունի՞: Մենք կարող էինք խաղաղ ապրել:

— Իհարկե, նշանակություն ունի: Բայց ես, բացի քեզանից, ոչ ոքի չեմ ուզում: Ինձ ուրիշ ոչ ոք պետք չէ: Եվ ես գիտեմ, որ դա շատ հեշտ է:

— Այո: Դու գիտես, որ դա շատ հեշտ է:

— Քեզ համար դժվար չէ այդպես խոսելը, բայց ես գիտեմ, որ դա հեշտ է:

— Կարելի՞ է քեզանից մի բան խնդրել:

— Այո:

— Խնդրում եմ, խնդրում եմ, խնդրում եմ, խնդրում եմ, լռի՛ր:

Տղամարդը ոչինչ չասաց, այլ նայեց կայարանի պատի տակ դրված ճամպուրակներին: Նրանց վրա բոլոր այն հյուրանոցների պիտակներն էին, ուր նրանք գիշերել էին:

— Բայց ես չեմ ուզում, որ դու այդ անես,— ասաց նա:— Ինձ հարկավոր չէ այդ:

— Կգոռամ,— ասաց աղջիկը:

Կինը գարեջրի երկու գավաթները ձեռքին դուրս եկավ վարագույրի ետեւից. գավաթները դրեց թաղիքի խոնավ տակդիրների վրա:

— Գնացքը ժամանում է հինգ րոպեից,— ասաց նա:

— Ի՞նչ ասաց նա,— հարցրեց աղջիկը:

— Որ գնացքը գալիս է հինգ րոպեից:

Աղջիկը, ի նշան շնորհակալության, ժպտաց կնոջը:

— Ավելի լավ է, ես ճամպուրակները տանեմ կառամատույցի մյուս կողմը,— ասաց տղամարդը: Աղջիկը ժպտաց նրան:

— Լավ: Հետո վերադարձիր, ավարտենք գարեջուրը:

Տղամարդը բարձրացրեց երկու ծանր ճամպուրակները եւ անցկացրեց երկաթգծի մյուս կողմը: Նայեց դեպի վեր, բայց գնացքը չտեսավ: Վերադառնալիս նա անցավ խորտկարանով, ուր մարդիկ խմում էին՝ սպասելով գնացքին: Վաճառասեղանի մոտ մի բաժակ Անիս խմեց եւ նայեց մարդկանց: Բոլորը համբերությամբ սպասում էին գնացքին: Նա դուրս եկավ հուլունքաշար վարագույրով դռնից: Աղջիկը նստած էր սեղանի մոտ եւ ժպտում էր նրան:

— Դու հիմա լավ ես զգում քեզ,— հարցրեց տղամարդը:

— Գերազանց,— ասաց աղջիկը:— Ինձ ոչինչ չի պատահել: Ես ինձ գերազանց եմ զգում:

1. *Էբրո*— գետ Իսպանիայի հյուսիս-արեւելքում, որ թափվում է Միջերկրական ծովը: Նավարկելի է:
2. Երկու գավաթ (խապ.)

3. *Մատուցակ*— քաղցր արմատով բազմամյա բույս. օգտագործվում է որպես դեղաբույս, ինչպես նաև՝ տեխնիկական նպատակներով: